



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԱԳՐԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



**ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ**

**ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ 2005-2006 ՏԱՐԵՇՐՉԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԳՐԱՄՆԵՐՈՒ ՅԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ**

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան եւ Ազգային Վարչութիւնը գոհունակութեամբ կը յայտեն մեր հաւատացեալ ժողովուրդին, որ ինչպէս ամէն տարի, այս տարի եւս, Ազգային Առաջնորդարանը իր տրամադրութեան տակ գտնուող կրթական հիմնադրամներէն յատկացումներ կատարեց մեր ազգային վարժարաններու արժանաւոր աշակերտներու, համաձայն՝ իւրաքանչիւր հիմնադրամի նպատակին:

Յայտնենք, որ Ազգ. Առաջնորդարանիս հովանիին տակ ստեղծուած են հիմնադրամներ, որոնց դրամատնային տոկոսներու հասոյթը տարեվերջին կը տրամադրուի հիմնադրամներու պայմանները լրացնող Ազգային վարժարաններու աշակերտներու:

- Ստորեւ յատկացումներու այս տարուան պատկերը.-
- Անժէլ Արփաճեան հիմնադրամի հասոյթէն՝ 150 տոլար, կը տրամադրուի Ռ. եւ Ա. Փիլիպոս Ազգ. Վարժարանի արժանաւոր աշակերտի մը:
  - Ռապըթ Արթունեան հիմնադրամի հասոյթէն՝ 400 տոլար, կը տրամադրուի Ռ. եւ Ա. Փիլիպոս Վարժարանի հայերէնի եւ անգլերէնի մէջ լաւագոյն արդիւնք ձեռք բերող երկու աշակերտներու:
  - Ալեքս եւ Մարօ Իսկէնտէրեան հիմնադրամի հասոյթէն՝ 400 տոլար, կը տրամադրուի Ռ. եւ Ա. Փիլիպոս վարժարանի արժանաւոր երկու աշակերտներու:
  - Յարութիւն եւ Արաքսի Քեօսեան հիմնադրամի հասոյթէն՝ 250 տոլար, կը տրամադրուի Ֆերահեան վարժարանի արժանաւոր ու կարիքաւոր աշակերտի մը:
  - Վիքթորիա Մինասեան հիմնադրամի հասոյթէն՝ 900 տոլար, կը տրամադրուի Ֆերահեան վարժարանի հայերէն լեզուի մէջ լաւագոյն արդիւնքները ապահովող երեք աշակերտներու:
  - Չայրլզ Քէյեան հիմնադրամի հասոյթէն՝ 2,800 տոլար, կը տրամադրուի Մետրոպէան վարժարանի շրջանաւարտներէն չորս լաւագոյն աշակերտներուն, իբրեւ նպաստ՝ համալսարանական ուսման իրենց ծրագիրներուն:
  - Ազգային Առաջնորդարանի Կրթանպաստի Յատուկ Հիմնադրամէն երկու յատկացում կատարուեցաւ. առաջինը՝ Պէյրութ, 1,500 տոլար, երկրորդը՝ Լոս Անճելըս՝ 1,000 տոլար:

Յայտնենք նաեւ, որ ընթացքի մէջ է համալսարանական ուսանողներու տրամադրուող Գարիքեան հիմնադրամի մրցանակաբաշխութիւնը. յանձնախումբին կողմէ այս մասին տրուելիք որոշումին մեր ժողովուրդը տեղեակ կը պահենք ատենին:

**ԴԻՒԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ**

## **WESTERN PRELACY SCHOLARSHIPS ALLOCATED TO PRELACY SCHOOLS FOR THE 2005-2006 SCHOOL YEAR**

His Eminence Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and the Western Prelacy Executive Council are pleased to announce that this year also, as in previous years, the Western Prelacy allocated scholarships to students of Prelacy schools who met the eligibility requirements.

There are several scholarship funds under the auspices of the Western Prelacy, the annual interests of which are allotted to students of Prelacy schools who meet the conditions.

Below are the figures for this year:

- Angel Arpajian Scholarship: \$150 to a student from Rose & Alex Pilibos School.
- Robert Artounian Scholarship: \$400 to two students from R. & A. Pilibos School who excel in Armenian and English.
- Alex and Maro. Iskenderian Scholarship: \$400 to two needy students from R. & A. Pilibos School.
- Haroutioun & Araxie Keosseian Scholarship: \$250 to a student from Ferrahian School.
- Victoria Minassian Scholarship: \$900 to three students from Ferrahian School who excel in Armenian.
- Charles Keyian Scholarship: \$2,800 to the top four graduating students of Mesrobian School towards their college education.
- Two allocations were made from a special scholarship fund; one in the amount of \$1,500 to a university student in Beirut, and the other in the sum of \$1,000 to a university student in Los Angeles.

Currently, candidates are being considered for the Garikian Scholarship which is specifically for college students. More details will be announced once the committee comes to a decision.

**Western Prelacy Divan**